



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլ-
տուրական մյուս արժեքների պահպա-
հանության նկատմամբ հոգատառությունը
Հայկական ՍՍՀ բաղադրիչների պարտ-
քին ու պարտականությունն է»:
(ՀՍԽՀ սահմանադրություն, հոդված 66)

Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրր-
ջանում՝ Լոռի-Ռերդ գյուղից դեպի արևելք
լեռնային բնության դյուքիլ միջավայրում
են գտնվում ֆեռդալական Հայաստանի
մայրաքաղաքներից մեկի՝ Լոռի-Ռերդի
կամ Լոռէի ավերակները։ Որպես հյուսի-
սային Հայաստանի Գուգարք նահանգի
անառիկ բերդավազք հիմնադրվել է
Անիի թագրատունիների Կյուրիկյան ճյու-
ղի ներկայացուցիչ՝ Գավիթ Անհողինի
(989—1048 թթ.) կողմից ու Շամշուլ-
դեից այստեղ է փոխադրվել Տաշիր Զո-
րագետի թագավորության մայրաքաղաքը։


Քաղաքատեղի ընդարձակ մնացորդնե-
րի ուսումնասիրությունը ցույց է տալիս,
որ Լոռէի տեղի ընտրությունը և քաղաքի
բազագրամասերի տեղաբաշխումը կա-
տարվել է թագրատունյաց թագավորու-



Քաղաքացիական շենք



Քաղաքացիական շենքի
ճերմին տեսքը



Թաղնիք

թյան մայրաքաղաք Անիի նմանությամբ: Քաղաքատարածությունը գրավում է Չոռագետ և Միսխանա գետերի խոր ձորերի միջև ընկած մոտավորապես եռանկյունաձև սարահարթը: Բնականորեն անափկ այդ հրվանդանի վրա հաջորդաբար սփռված էին բուն քաղաքը կամ շահաստանը և միջնաբերդը, իսկ արքարձանները գտնվում էին հիշյալ ձորերով հիմնական քաղաքատարածությունից անշատված Ամրակից (կամ Աղ-շահար) և Կենդազեղ կոչված սարահարթերի վրա: Կապը դրանց հետ իրականացվում էր Միսխանա և Չոռագետ գետերի վրա ձրգված կամուրջների միջոցով (առաջինը ամրողապես վերականգնվել է վերջին տարիներին, իսկ երկրորդից պահպանվել է միայն ձախափնյա խելք):


Միջնաբերդը տեղադրված էր հրվան-



Բաղնիքի ջրատար խողովակներ

դանի սրածայր վերջավորության վրա, զրադեցնելով 9 հա տարածություն: Այն հուսափ կերպով պահպանված էր հաջորդաբար մի քանի շերտով հավելված պաշտպանական հզոր պատերով (հաստությունը տեղ-տեղ հասնում է 20 մ), որում 214 մ ընդհանուր երկարությամբ ձգված են Միսխանայի ձորից մինչ Չոռագետի ձորը (պահպանվել են զգալի բարձրությամբ): Միջնաբերդի կամարակապ դարպանը բացվում է պարսպապատի հյուսիս-արևելյան հատվածում: Դրսի կողմից պարսպապատի ուղղությամբ ձգվում էր խանգակ, որը պաշտպանական նկատառումներով ստորգետնյա առվի միջոցով լցվում էր ջրով: Պաշտպանական նպատակների էր ծառայում նաև զարտնուղին կամ «ցրի ճամփան», որը միջնաբերդի հյուսիս-արևելյան անկյունից իջնում էր գեպի Միսխանայի ձորը և զուրս էր զալիս այնտեղ աղբյուրի շուրջը կառուցված բուրգի մեջ: Միջնաբերդի տարածքում պահպանվել են երկու հին բաղնիքների ավերակներ (մեկը Չոռագետի ձորեղբին, մյուսը՝ բերդամիջի ճանապարհի մոտ), ինչպես նաև քաղաքացիական (ըստ երեսվթին հետագայում մզկիթի վերածված) մի շենք ու բնակելի տների մնացորդներ:

Շահաստանը (շուրջ 25 հա մակերեսով) ձգվում էր հիշյալ պաշտպանական գծից առաջ, զեպի հյուսիս-արևմուտք և կից սարահարթից անջատված էր երկրորդ պարսպապատով, որը միջնաբերդի պարսպապատից հեռու էր 700 մ (տեղում պահպանվել են դրանց հետքերը): Բացի պաշտպանական այդ երկու հզոր գծերից, շրջակա ձորերում (թշնամու ներթափանցան համար մատչելի տեղերում) կառուցված էին պաշտպանական լրացուցիչ պատեր: Խնձոր Անիում ու միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքներում, կողի բերդի պաշտոպանական միջոցների նկարագրված համակարգը (ներառյալ նաև ջրամատակարարման), և թարկված էր մեկ հիմնական նպատակի՝ պահպանվել



Հատված միջնաբերդի պարսպապատից

բերդաքաղաքի պաշտպանական բարձր
համականիշները, որոնց շնորհվել էութիւ-
բերդը անառիկի համբավ ստացավ:
Մեծ զոհերի գնով սեղուկների էմիր
Ղզլիի հրոսակները 1105 թ. գրավեցին
Էռուէն: Վրաց թագավոր Թավիթ Շինարա-
րի օրոք Էռուէն միացվում է Վրաստանին
ու հանձնվում վրաց Օրբելյան իշխաննե-
րին իբրև տիրույթ: Գնորդի 111-ի և նրա
դստեր՝ թամար թագուհու ժամանակ
արքունիքին մատուցած ժառայություննե-
րի համար Էռուէն հանձնվում է ամիրսպա-
սալար Սարգիս Զարարյանին, որից հետո
անցնում նրա որդուն՝ ամիրսպասալար
Զաքարի Միաբրդելուն (Երկայնաբա-
զուկին):

Զաքարյանների օրոք Էռուէնում ժամանակին
են շինարարական աշխատանքներ: Ամ-
րացվել են քաղաքակարիսները, կո-
ռուցվել կամուրջներ ու այլ շինույթյուն-
ներ: Քաղաքի աճած նշանակության մա-
սին է վկայում այստեղ համահայաստան-
յան եկեղեցական ժողով գումարելու
փաստը, որին մասնակցել են հայ եկե-
ղեցու նշանավոր գործիչներ՝ Միհթար
Գոշը, Խաչատոր Տարոնացին, Հովհաննես
Սահանեցին և ուրիշներ:

Ողբերգական է բերդաքաղաքի հետա-
գա պատմությունը: 1228 թ. եռերեսի
շահ Զալալէղդինի հրոսակները պաշա-
րում են քաղաքը, ավերում նրա արվար-
ձանները, սակայն շնորհագում խոր-
տակել բերդի ղիմաղրությունը: 1238
թվականին, երբ այն ժառանգաբար ան-
ցել էր Զաքարի որդուն՝ Շահնշահին,
Էռուէն պաշարվում է մոնղոլական Զազա-
թայ խանի հրոսակների կողմից, ղժվա-
րությամբ գրավվում ու զաման ասպա-
տակության ենթարկվում: Այնուհետե
շուրջ 200 տարի Էռուէն ձեռքից ձեռք է
անցնում, այդ թվում վրաց Օրբելյան իշ-
խանական տոհմի ներկայացուցիչների:
1430 թ. օտար զավթիչները նորից տի-
րում են Էռուէն, սակայն շուտով ստիպ-
ված են լինում այն վերադարձնել Օրբել-
յաններին: Հետագա դարերում բերդա-



Էռուէն Միաբրդ գետակի վրա



քաղաքը հետզհետե ամայանում է: Նրա ավերակների վրա առաջանում է լոռի-բերդ գյուղը, որը ջրամատակարարման դժվարությունների ու այլ անհարմարությունների պատճառով 1925—1931 թթ. տեղափոխվում է քաղաքատեղի սահմաններից գուրս՝ դեպի արևմուտք, հիմք դնելով այժմյան լոռի-բերդ գյուղին: Քաղաքատեղում 1966—1967 և 1969—1973 թթ. հնագիտական պեղումներ է կատարվել, որոնց ընթացքում գտնվել են բրոնզի, վաղ երկաթի ժամանակաշրջաններին ու միջնադարին վերաբերող հետաքրքր նյութեր:

Հարուրյունյան Վարազդատ Մարտիրոսի Լոռի-բերդ կամ Լոռէ

Մասն. խմբագիր՝ Գ. Ս. Շախսկյան
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
Վերստուգող սրբագրի՝ Գ. Հ. Ղազարյան

Խաչքար



© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:
Ստորագրված է տպագրության
14.07.1987 թ.: Ֆորմատ՝ 84×108^{1/32}:
Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42
պայմ. մամ. հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր
784: Տպաքանակ 10000: Գինը 15 կոպ.:
ՀՍՍՀ Հրատարակչությունների, պոլիգրա-
ֆիայի և գրքի առևտութիւնների պետա-
կան կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: